

ՄՐՑՈՒՅԹ

Անվտանգության համակարգերի ձեռք բերման, տեղադրման և սպասարկման ծառայության ձեռքբերման

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հայտարարում է Անվտանգության համակարգերի ձեռք բերման, տեղադրման և սպասարկման ծառայության ձեռք բերման բաց մրցույթ 4 լոտով՝

Լոտ 1. Աշխատակիցների մուտքի-ելքի կառավարման Համակարգ

Լոտ 2. Տեսահսկման համակարգ:

Լոտ 3. Ահազանգման և հրդեհի ահազանգման համակարգեր:

Լոտ 4. Փոշիով և ածխաթթվային կրակմարիչներ:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները, որոնք մրցույթի հայտի ներկայացման պահին ունեն համանման փորձ, մասնագիտական փորձառություն և աշխատանքային ռեսուրսներ:

Մրցույթին չեն կարող մասնակցել այն կազմակերպությունները՝

- որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,
- որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մրցույթի մասնակիցները յուրաքանչյուր լոտի համար պետք է ներկայացնեն՝

1. Մրցույթի առարկայի գինը՝ ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ: Գինը պետք է ներառի մատակարար կազմակերպության կողմից սարքավորումների առաջնային միացման և սարքինացման արժեքը:
2. Վճարման պայմանները, աշխատանքների կազմակերպման կարգն ու ժամկետները,
3. Երաշխիքային սպասարկման ժամկետը
4. Նմանատիպ մատակարարումների և աշխատանքների իրականացման փորձը հավաստող տեղեկություններ, գործընկերների ցանկ

5. Առաջարկվող սարքավորումների մանրամասն նկարագրերը՝ մոդել, արտադրող, արտադրողի երկիր և այլն:

Մրցույթի մասնակիցների կողմից ներկայացվող առաջարկի գործողության ժամկետը վավեր պետք է լինի առաջարկների ուղարկման օրվանից սկսած 15 օրից ոչ պակաս:

Լոտերի տեխնիկական նկարագրերի նվազագույն պահանջները կտրամադրվեն մրցույթի մասնակից կազմակերպությանը՝ տեղեկատվության գաղտնիության պայմանագիր ստորագրելուց հետո, որի համար մասնակիցը համապատասխան գրություն պետք է ուղղի tender@arca.am էլ. հասցեին:

Սույն մրցույթը հայտարարողը իրավունք ունի մինչև առաջարկները ամփոփելը ցանկացած պահի դադարեցնել մրցույթի անցկացումը և հրաժարվել բոլոր ստացած հայտերից՝ առանց որևէ պարզաբանման և չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև:

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով:

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնական ժամկետն է 2024 թվականի ապրիլի 15-ի ժամը 17.00-ն: